նեաց բարձն ողբունի տաճարին մէջ, «Համապատիւ» Բագրատունեաց եւ Մամիկոնեանց (Օրբէլ.)։

Սիւնեաց յարաբերութիւնք Բիւզանդիոնի հետ մինչեւ Բաբիկ Ա. (379-400) ըստ ինքեան չունի այն սերտ երեւոյթը, որ բոլորովին բնական է Տիզբոնի հետ. եւ ճիշդ այս վիճակին մէջ կը գտնենք Սիւնեաց նախարարութիւնը Ե°դ դարուն մէջ, որուն Տէրն է Վասակ Ա. (412-452)։

Վասակ, ինչպէս պիտի տեսնենք, ոչ Բիւզանդիոնի կը միտի, ոչ ալ Տիզբոնի. նա լաւ կը պահէ իր յարաբերութիւնը Դրան հետ-կը գործակցի անոր շարժումներուն՝ Հայկական թագը յափշտակելու համար։ Այս միտումը բոլորովին տարբեր բան մ'է, իր երկրին եւ իր գիրքին ներշնչումը, որուն զոհեց Վասակ իր իշխանութեան ներքին անդորրութիւնն ու ինքզինքը։

Բաբիկէն մինչեւ իր որդին՝ Վասակ՝ Սիւնիք լուսաւորութեան շաւղին մէջ էին. շինութիւն մէկ կողմէն, գրական զարգացում միւս կողմէն աւելի մեծ փառք մը կը պատրաստէին Վասակին. իր հօրեղբայրը Վաղինակ Բ (401—410) ներքին բարգաւաճումի կը նուիրէ ինքզինքը, եւ այն միջոցին է որ անմահն Մեսրոպ իր նորագիւտ նշանագիրներն «ի Սիւնական աշխարհն» եւս հաստատելու համար հոն կ'երթայ եւ մեծ օգնութիւն կը գտնէ Վաղինակէն, անարգել կը պարապի Սիւնեաց աշակերտութեամբ, եկեղեցական եւ վանական կարգադրութեամբ եւ դպրոցներու հաստատութեամբ (Կորիւն էջ 14. — Խոր. Գ. խէ)։

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

### ՀԻՆ ՀԱՅՈՑ ՏԵՂԻՈՑ ԱՆՈՒՆՆԵՐԸ

(Շարունակութիւն)

ԲԱՐՁԻՇԷՆ տեղի թ. 111 Վայոց ձոր գ.ին մէջ Օրբէլ. 261. բարձի? (բարձ = «բարձ, պատիւ, աստիճան») + շէն։

(ԲԱՐՁՐ ԲԵՐԴ Կիլիկիոյ մէջ Ինճիճ. Նոր Հայ. 364։)

ԲԱՐՁՐ ՀԱՅՔ հայկական նահանգ տես վերն էջ 67։

ԲԱՐՁՐԱԲՈՒՂ (-ԲՈՂ) ամուր տեղ Եղիշ. 52. բարձր + բուղ?։

ԲԱՐՁՐԱՇԷՆ տեղի թ. 120ա. Այլախ գ.ին մէջ ԱՍ. 209 = բարձրաշէն «բարձր շինուած»։

ԲԱԽԱՑ ՁՈՐ գիւղ թ. 178 Շիրակ գ.ին մէջ Ասող. 188. Բախաց (յոգ. սեռ.՝ Բախ? ուղղականի մը) + ձոր։ — ԲԱԽ անունով տեղ մը կը յիշէ Ինճիճ. Նոր. Հայ. 191 Տարաւնոյ մէջ. բախ անհոլով բառը կը նշանակէ «վախճան, չափ, սահման»։

ԲԵՐԱՆ տեղի թ. 112 Գեղարքունի գ.ին մէջ Օրբէլ. 264, ԱՍ. 38. բերան բառն է։

ԲԵՐԴ տեղի թ. 112 Գեղարքունի գ.ին մէջ ԱՍ. 38, թ. 115 Ծղուկք գ.ին մէջ ԱՍ. 245, աւագականոց մը Օրբէլ. 1, 275 = բերդ «ամրոց»։ Անկէ՝ ԲԵՐԴՔ գիւղ Սիւնեաց մէջ Օրբէլ. 1, 218, ԱՍ. 81 = բերդք «ամրոցք»։ ԲԵՐԴԱՑ ՓՈՐ թ. 163 գ. Տայոց տես վերն էջ 240 = «ձոր բերդերու»։

ԲԵՐԴԻԿ տեղի թ. 109 Երնջակ գ.ին մէջ Օրբէլ. 2, 272, թ. 117 Բաղք գ.ին մէջ ԱՍ. 275, թ. 179 Վանանդ գ.ին մէջ ԱԱ. 107. բերդ + իկ[1] նուազական մասնիկ։ — ԲԵՐԴԿՈՒՆՔ գիւղ թ. 176 Բագրեւանդ գ.ին մէջ Փարպ. 176, յոգնակի *բերդիկի. *ԲԵՐԴԻԿՔ, սեռ. Բերդկոց (կամ Բերդկանց ԱԱ. 352 Բերդկունք ուղղականէ մը) գիւղ թ. 187 Մազազ գ.ին մէջ Յովհ. Կթղ. 53։ Նոր Հայ. Բերդեկ՝ Խարբերդի հիւսիսակողմը, Արածանւոյ = Մուրատ-սուի հիւսիսային ափին վրայ՝ հին հայ. *Բերդակէ կամ *Բերդիկէ Ինճիճ. Նոր Հայ. 227։ Ուրիշ երկու Բերդակ տես Ինճիճ. անդ 143, 191։ Անկէ նաեւ արդի հայ. Բերդեկերէկ Ճորոխի վրայ = հին հայ. *Բերդակերակ?, նոյնպէս ԲԵՐԴԿԱՆԵՐԷՋ Օրբէլ. 1, 250?, ԲԵՐԴԻՄԱՅՐ Օրբէլ. 262? (մայր = 1. մայր եւ 2. մայրի. մայրի իմաստով չի յարմարիր։). ԲԵՐԴԱԿՈՒՐ (-ԿՈՐ) Տրտու գետին վրայ Կաղանկ. 239, 277, Կիր. 100?։

ԲԵՐԴԱԹԱՂ աւերակք բերդի մը թ. 111 Վայոց ձոր գ.ին մէջ ԱՍ. 172. տեղի Աշտարակայ մէջ (Արագածոտն) ԱԱ. 185. բերդ + թաղ։

ԲԵՐԴԱՁՈՐ տեղի թ. 113 Սոթք գ.ին մէջ Օրբէլ. 265, թ. 114 Աղահեճք գ.ին մէջ ԱՍ. 270 (թրք. Քալէ-տէրէսի). բերդ + ձոր։ Զանազանելու է Բերդաձորէ (տարբ. ընթերց. Բերդաձոր) թ. 123 գ. Արցախի. տես վերն էջ 227։

ԲԵՐԴԱՏԱԿ տեղի թ. 120ա. Այլախ գ.ին մէջ ԱՍ. 261. բերդ + տակ «արմատ, հիմն, յատակ» = «բերդի տակ»։ Հմմտ. թրք. Քալէ-տիպի = հայ. Բերդատակ թ. 187 Մազազ գ.ին մէջ ԱԱ. 360։

ԲՋՆՈՒՆԻՔ թ. 38 գ. տես վերն էջ 194։

ԲԻՒՐԱԿԱՆ փոքրիկ ամրոց Յովհ. Կթղ. 182, 183 թ. 180 Արագածոտն գ.ին մէջ ԱԱ. 156—157. բիւր «տասն հազար» + ական մասնիկ?։

ԲԻՒՐԱԿՆ թարգմանութիւնն է արդի թրք. Պինկէօլի, հին հայ. Սրմանց լերան արդի անունն. տես վերն էջ 184։

ԲԼՈՒՐ տեղի թ. 110 Ճահուկ գ.ին մէջ Օրբէլ. 272, գիւղ թ. 181 Ճակատք գ.ին մէջ ԱԱ. 126 = բլուր «փոքրիկ լեռնակ»։ Նոյն անունն է նաեւ Plur (արդի հնչմամբ) ընդ մէջ Բաբերդի եւ Երզնկայի Լինչի քարտէզին վրայ, Strecker ZGE. 4, 1869 տխտ. Դ., Կարնոյ արեւմտեան կողմը Կինէ 1, 131։ Անկէ՝ ԲԼՐԱԿ գիւղ թ. 83 Անձեւացիք գ.ին մէջ Արծր. 212 — բլրակ «փոքր բլուր»։ — Ուրիշ Բլուր մը՝ գիւղ թ. 176 Բագրեւանդ գ.ին մէջ (ուր Ս. Սահակ վախճանեցաւ) Փարպ. 103, Խոր. 270, Կորեան յետնադոյն

[1] -իկ. սեռ. -կան, յետ թ.գղ. -կանց՝ կամ -իկի. սեռ. -կանց կամ -կաց։

խմբագրութեան մէջ 41 "գեւղն Բլուր,, կ'ըսուի, իսկ հնագոյն խմբագրութեան մէջ (Վիեննա. 1894) 41՝ "գիւղ Բլրոցաց,, ուրեմն ուղղականը Բլրոցք, որ Բլուրի հետ (յք. բլուրք, սեռ. բլրոց) չի համաձայնիր: — ԲԼՈՒՐՍ գիւղ Թ. 9 Կարին[1] գ.ին մէջ Ղաստիվ. 85. յետնագոյն լեզուի հայցականն իբր ուղղական գործածուած (տես վերն էջ 291), ուրեմն Բլուրք-ի տեղ = "բլուրներ,,: Ըստ ԱԱ. 23 այժմեան Բլուրն է Թ. 171 Բասեան գ.ին մէջ, Ինճիճ. Նոր Հայ. 91, Թրք. Թէփէճիկ = "փոքրիկ բլուր,,:

ԲՆՈՒՆԻՔ տեղի Թ. 115 Ծղուկք գ.ին մէջ Օրբել. 1, 274. 2, 260 տես վերն էջ 283:

ԲՈԼՈՐԱԲԵՐԴ տեղի Թ. 111 Վայոց ձոր գ.ին մէջ ԱԱ. 98. Բոլոր "կլոր, ամբողջ,, + բերդ = "կլոր բերդ,,:

ԲՈԼՈՐԱՊԱՀԱԿ Թ. 171 Բասեան գ.ին մէջ ("ուր Մուրց եւ Երասխ խառնին,,) Սեբ. 34, ԱԱ. 25 (պահականոց մը). Բոլոր "կլոր, ամբողջ,, + պահակ "պահապանք, պահականոց,, Հբ. 217:

ԲՈԼՈՐԱՔԱՐ Օրբել. 2, 37, Թ. 115 Ծղուկք գ.ին մէջ ԱԱ. 447. Բոլոր + քար = "կլոր քար,,:

ԲՈՂԱՇԷՆ Օրբել. 1, 224, ԱԱ. 68 Թ. 112—113 գ.ին մէջ. Բող? + շէն "գիւղ,,. ԲՈՂԲԵՐԴ ամրոց Թ. 171 Բասեան գ.ին մէջ Փարպ. 447, ԱԱ. 18. Բող? + բերդ:

ԲՈՂՈՏԻՋՈՒՐ տեղի Թ. 120—. Այլախ գ.ին մէջ Օրբել. 261. սեռ. Բողոտի? + ջուր:

ԲՌՆԱԿՈԹ տեղի Թ. 115 Ծղուկք գ.ին մէջ Օրբել. 260. ԲՌՆԱՎԷԺ (շահաստանն Բռնավիժի) Այրարատայ մէջ Փարպ. 367, ԱԱ. 442. Բռնաւ "կռուփ,,? + ժիժ տես վերն էջ 280 եւ վէժ էջ 285, հմմտ. Թորթմէժ: Անկէ Նոր Հայ. Բռնաշէն գիւղ 10 ժամ հեռու Մշէն Ինճիճ. Նոր Հայ. 190?:

ԲՐԱՍՏԻԿ Երզնկայի քով Strecker ZGE. 4, 1864 տխտ. Գ. պըստ (արդի հայ. բըստ) "մաքուր արձան,, Հք. 375 + իկ նուազական մասնիկ:

ԲՐԳՆԵՐ տես վերն Բաքնայր: — ԲՐԳՆԻԿ, ԲՌՔՆԻԿ գիւղ Սեբաստիոյ քով Ինճիճ. Նոր Հայ. 288. Բարքն "աշտարակ,, բառէն?:

ԲՐՏԻ ԱՑՐՔ տեղի Թ. 112 Գեղարքունի գ.ին մէջ Օրբել. 264, ԱԱ. 72 = անապատ Բրտի Այրեաց ի Գեղամ կողմնկ. 222. Բրուտ "կաւագործ,, + այր = "կաւագործի այր ծերպ,,:

ԳԱԲԻՂԵԱՆՔ Թ. 172 գ. տես վերն էջ 248:

ԳԱԳԿԱԿԵՐՏ տեղի Վասպուրականի մէջ Արծր. 256. "անուանեաց (Գագիկ) յանուն իւր զձեռակերտն Գագկակերտ,, (իբր 900ին). = "Գագիկէ շինուած,,:

ԳԱԶԱՆԱԾԱԿՔ տեղի Թ. 172 Գարեգեանք գ.ին մէջ Ասող. 79, Վարդան 81. Գազան "վայրենի անասուն,, + ծակ "որջ,, = "Գազաններու որջ,,:

ԳԱԶՐԻԿԵԱՆ Թ. 103 գ. Վասպուրականի. Գազրէկ յատուկ անուն Եղիշ. 58, 77 եւն + եան մասնիկ էջ 277:

ԳԱԵԼ գետ Թ. 4 Եկեղեաց գ.ին մէջ Ագաթ. 49, 591 տես վերն էջ 130 = Գայլ: Հմմտ. Λύκος. տես Benseler-ի Wb. der griech. Eigennamen. Երկրորդ Գայլ գետ մ'ալ (տես վերն էջ 67, 137) կը յիշէ ԽԱՍ. 30 իբրեւ Հայոց գլխաւոր չորս գետերէն մին. Եփրատ, Երասխ, Գայլ (գետ ի հարաւ կ'ընթանայ) եւ Ակամփսիս (Ճորոխ): Այս Գայլով հասկցուածն է Լիճիկ-Կեղի-Փերի-սու որուն միջին ընթացքին վրայ էր (Դ. Հայոց) Թ. 10 Խորձեան գ.ը: ԽԱՍ. 30 Դ. Հայոց մէջ ալ Գայլ կ'անուանէ այս գետը, զոր ԽԱՍ. 30 Բարձր Հայոց մէջ Գայլ անուանած էր, իբր այն թէ այս երկուքն իրարմէ տարբեր գետեր ըլլային: Բայց իրողութիւնն ասանկ չէ: ԽԱՍ.ի քով էջ 30 խնդիրը Լիճէի քարտէսին Kighi-suին վրայ է, որ Կարնոյ հարաւակողմէն բղխելով՝ Կեղի-Խորձեանէն կ'անցնի եւ այժմեան Պիւանեկ եւ Թերջանի միջեւն՝ Մուրադ-սու — Արածանի կը թափի: Կ'երեւայ թէ այս գետն անուան կողմանէ նոյն է nahr aδ-δîb "Գայլ-գետ,, ըսուածին հետ (Ibn Serapion JRAS. 27, 13), որ Qālīqalā-յի (Կարնոյ) մօտերը լեռնէ մ'ելլելով՝ Շիմշատ քաղաքէն վեր Արսանաս (Արածանի) կը թափի: Եթէ ուղիղ է այս ըսուածն, եւ Սինկիւս — Աք-սու — Խոզաթ-սուի հետ նոյն է Սալգիտ գետն որ Մեղուր լեռնէն գալով Շիմշատէն եւ մերձակայ լեռներէն քիչ մը վար Արածանիայ հետ կը խառնուի (Ibn Serapion անդ), այն ատեն Շիմշատ — Աշմուշատ-Խարբերդի հիւսիսակողմն եղած պիտի ըլլայ: Բայց հմմտ. Տոմաշէկ Կիպերտի հանդիսին առթիւ հրատ. գրութեան մէջ էջ 138 եւ վերն ըսուածը:

ԳԱՅԼԱԽԱԶՈՒՏ լեռ մը, յառաջ Գ-խէբ ըսուած, Թ. 5 Մանանաղի? գ.ին մէջ Ղաստիվ. 103, Ինճիճ. ՀՀ. 23. Գայլախազ "կայծքար,, + ուտ մասնիկ = "կայծքար ունեցող,,:

ԳԱՅԼԱԿԱԼ տեղի Թ. 110 Ճահուկ գ.ին մէջ Օրբել. 273, ԱԱ. 480 (Գայլ-կալի Բերդէ). Գայլ + կալ? (կալ սովորաբար = "կասելու տեղ,, կալ = "կալթիլ,,):

ԳԱՅԼԱՏՈՒՔ քաղաք, Սեբէոսի քով 76 ընդ մէջ Անգղի (Ծաղկոտն գ.ին մէջ տես վերն էջ 302) եւ Երգինոյ՝ յիշուած, ըստ Գայլատու (սեռ. Գայլատուայ) Խոր. 141, ԽԱՎ. 611, Թ. 183 Կոգովիտ գ.ին մէջ ԱԱ. 491—492. Գայլ + տուք էջ 286?:

ԳԱՅԼՈՑ ՎԱՆՔ տեղի Թ. 115 Ծղուկք գ.ին մէջ Օրբել. 2, 260 = վանք գայլերու:

ԳԱՅԼՈՒՋՈՐ մենաստան Թ. 111 Վայոց ձոր գ.ին մէջ Վարդան աշխ. 422 = Գայլէջոր, Գլաջոր եւն ԱԱ. 130. Գայլ? + ձոր:

ԳԱՆՁԱԿ քաղաք (Ար)շակաշէն գ. մէջ Կաղանկ. 265, Աղուանից մէջ Կիր. 117, Հայոց մէջ Մաթ. Ուռհ. 286, այժմ Գանձա կամ Գէնջէ = Jelisavetpol (Elizabetpol). Գանձակ տեղի Թ. 106 Գողթն գ.ին մէջ ԱԱ. 320—321, տեղի Թ. 111 Վայոց ձոր գ.ին մէջ ԱԱ. 98, 180, Օրբել. 2, 102, Թ. 112 Գեղարքունի գ.ին մէջ ԱԱ. 38, 42. Գանձակ (Գանձակ Ղեւոնդ 134) գլխաւոր քաղաք Ատրպատականի Պարսից եւ Հայոց սահմանին վրայ, պրս. Ganjak, Ganja, յն. Γάζακα եւն.

[1] "Համեմայք ի պատուած կարնոյ մէջ է գիւղն որ կոչի Բլուրս,, Ղաստիվ. 85:

digitised by A.R.A.R.@

Հք. 33—34. հայ. գանձ = պրս. ganǰ. "մթերք ընչից" Հք. 126։

ԳԱՆՁԱՂԱՆՏԱՌ տեղի Թ. 112 Գեղարքունի գ. ին մէջ Օրբել. 263 (այժմ՝ Գանձակ ԱՍ. 42?). անորոշ բառով բարդուած։

ԳԱՆՁԱՍԱՐ մենաստան Արցախի մէջ Խաչենաբերդի հանդէպ, լերան մը վրայ Կիր. 146, Վարդան 153, Վարդան աշխ. 414, Ինճիճ. ՀՀ. 314. գանձ? + սար "գագաթ"։

ԳԱՆՁԱՓԱՐԱԽՈՒ ՎԱՆՔ Սիւնեաց մէջ ԱՍ. 21, Ինճիճ. ՀՀ. 300, Նոր Հայ. 272. գանձ? + փորոխ։

ԳԱՌՆԱԿԵՐ գիւղ Թ. 112 Գեղարքունի գ. ին մէջ Ինճիճ. ՀՀ. 273, ԱՍ. 39 չեն կրնար բառը "գառնուկ" + կեր "ուտող" ("Գառն ուտող") ըլլալ։

ԳԱՐԴՄԱՆԱՁՈՐ = ՁՈՐՆ ԳԱՐԴՄԱՆԱՑ ԵՒՆ = Թ. 150 գ. Ուտայ. "ձոր Գարդմանի"։

ԳԵՂԱՄԱՐԲԱԿ տեղի Թ. 113 Սոթք գ. ին մէջ Օրբել. 265. Գեղամ տեղւոյ անուն ("Ծովն Գեղամայ" Խոր. 122[1], Առաք. 259) + բակ "գաւիթ" = Գեղամայ գաւիթ։

ԳԵՂԱՄԱՇԷՆ Ինճիճեանի քով ՀՀ. 457, ԱԱ. 359 Յովհ. Կթղ. էն 191 յառուկ անուն չէ, այլ Թ. 187 Մազազ գ. ին մէկ վերադիրն ("գիւղամամբ գեղամաշէն գաւառին Մազազայ") եւ կը նշանակէ "Գեղամէն հաստուածեալ"։ Համեմ. Խոր. 29՝ Գեղամ կը շինէ Գեղամին, որ վերջէն Գառնի կոչուեցաւ։ Գառնի քաղաքը Մազազ գ. ին մէջն էր։

ԳԵՂԱՐԴԱՍԱՐ ԱԱ. 334, ԳԵՂԱՐԴԱՁՈՐ 335, ԳԵՂԱՐԴԱՑ ՎԱՆՔ 336 Գառնիէն 10 քիլոմ. դէպ ի հիւսիս-արեւելք Թ. 187 Մազազ գ. ին մէջ, յառաջ այս վանքին մէջ պահուած սուրբ գեղարդէն (հյ. գեղարդն, սեռ. գեղարդեան, յետնագոյն ձեւը՝ գեղարդ կամ Kieγart: Globus 63, 372) անունն առած Վարդան աշխ. 420, ԱԱ. 338։ Վանքիս հնագոյն անունն էր Այրի վանք տես վերն։

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ Թ. 112 գ. Սիւնեաց տես վերն էջ 225, նաեւ տեղի Թ. 117 Բաղք գ. ին մէջ ԱՍ. 274, "Ծովն Գեղամայ" Խոր. 122 Գեղարքունի գ. ին մէջ, Գեղ լեռը Գեղարքունեաց մէջ Խոր. 28, Սոտ-Սեբ. 7, Յովհ. Կթղ. 181, ԱՍ. 26 աշխարհագրօրէն իրարու կը վերաբերին, իսկ ստուգաբանօրէն չեմ կրնար զանոնք իրարու հետ միացընել, որչափ ալ ամէնուն մէջ գեղ- գտնուի։ Խոր. 28 այս ամէն անունները բնականապէս առասպելական Գեղամ անունէն յառաջ կը բերէ։

ԳԵՆԵՆԱԹԱՂՔ տեղի Թ. 116 Հաբանդ գ. ին մէջ Օրբել. 267 (= ԳԻՆԵԹԱՂՔ? ԱՍ. 271). գինի? + թաղ-ք տես վերն էջ 278։

ԳԵՏՔ ԱԻԱՆ (կը գտնուի միայն հայցականն՝ "ի Գետս աւան") Թ. 92 Ճուաշռոտ գ. ին մէջ Արծր. 253 = գետ "գետակք" (հյց. "գետս")։

ԳԵՏԱԲԱԿՔ,[1] սեռ. Գետաբակաց Վարդան 144, հյց. Գետաբակս անդ 138, Գետաբակս Կիրակոս Կիր. 31 Թ. 150 Գարդման գ. ին սահմանին վրայ

[1] Ըստ այսմ նաեւ անձի անուն Թորենացւոյ՝ քով 13։ 28 (Նախարարութեանց ժամանակէն)։

Ինճիճ. ՀՀ. 339, այժմ Գետաբեկ տես վերն էջ 233. Գետաբակ տեղի Թ. 113 Սոթք գ. ին մէջ Օրբել. 265. գետ + բակ = "գետատաւիթ"?։

ԳԵՏԱԹԱՂ Թ. 115 Ծղուկք գ. ին մէջ ԱՍ. 220. գետ + թաղ տես վերն էջ 278։

ԳԵՏԱԿԻՑՔ վանք մը Կիր. 73 (ոչ շատ հեռու Գետիկ վանքէ Թ. 153 Ձորափոր գ. ին մէջ Ինճիճ. ՀՀ. 515, 357). Գետակից տեղի Թ. 115 Ծղուկք գ. ին մէջ Օրբել. 260, ԱՍ. 208. գետ + կից "կցորդ" կամ կցել "միացում", ուստի կամ "նոյն գետոյն կից"[1] կամ "միացում գետոց" (հմմտ. լտ. ad confluentes = Koblenz)?։

(Շարունակելի)

Հ. ՀԻՒԲՇՄԱՆ

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊ. ՍԱՌԱՖԵԱՆ

### ԽՐԳ ԽՐԻՈՐԴ

Որով ցուցանէ Սարգսի մեր պայծառ,
Փոյթ Եպիսկոպոս արհնիլն ի ստորոգ,
Սուրբ Էջմիածնի յաւէտ հրաշափառ,
Եւ հոգեւորութիւնըն անհուն յայժ յարմար։

1 Իսկ արդ Սարգիս ժամանն ըլնի
Յառաջին գահ Հայոց մեծի,
Յաւուրս տեղւոյն Հայրապետի
Աբրահամու որ Մըշեցի։

2 Այս ինչ ըլնէր յաշխան միջի
Ի թուականի մերում փրկչի
Հազար եւ եօթն հարիւրորդի 1734
Երեսներորդ եւ չորրորդի

3 Ուր նա եղիտ խօթ ի մահճի
Կաթողիկոսն զոր յիշեցի,
Որ փութօրեայ պահու ըզկնի
Առ հանգերձեալն անդրափոխի։

4 Ապա ժողով անդ գումարի
Ընտրութիւն նոր գահակալի,
Յոր Սարգիս իսկ մըտեալ բազմի
Որպէս գիտուն դէտ անուանի։

5 Նոյն ժողովոյ էր նա հօգի
Ուր հանճարով քաջ բարբառի
Եդեալ համայնց իսկ առաջի
Զաբրահամ դէպ Հուեդեսանի։

6 Որ ընդ աւուրս ընդ այնոսիկ
Գնա գտանիւր յաթոռն յայնմիկ,
Ուր կատարեալ զուխտըն լուիկ
Գտանեալ խոկայր անդրէն յիւր բնիկ։

[1] Համեմ. Ինճիճ. ՀՀ. 515 "Գետակից վանքն, որ եւ կից էր գետոյն Աղստեւայ"։

digitised by A.R.A.R.@